

«Յանուն ամենագութ եւ ամենաողորմած Աստուծոյ. այս է Ջարրահ ի. Աբդալահ թուղթը առ Տփղիսի, Մանգլիս գաւառի, Ջուրղանահանգի բնակիչները, թէ նոքա ինձ բերեցին Հաբիր ի. Մասլամայի ապահովութեան թուղթը, նոցա շնորհած այն պայմանով, որ նոքա ընդունեն չնչին գլխահարկ տալ, եւ թէ նա նոցա հետ խաղաղութիւն կապեց նոցա հողերի, հաղողի թփերի եւ ջրաղացների, որոնք — — — է եւ — — — կը կոչւին, Մանգլիսի գաւառում, եւս կոչուիտ՝ գաւառի, Ջուրղան երկրի թամ եւ Դիգունայ (վիճակների) ապահովութեան հիման վերայ, այն պայմանով, որ նոքա այս ջրաղացներից եւ հաղողի թփերից տարեկան 100 դրամ վճարեն առանց կրկնութեան: Ես կատարեցի նոցա պարգեւած ապահովութեան եւ խաղաղութեան (պայմանը) եւ հրամայեցի հաղորդել նոցա դորա մասին եւ ում թուղթս կարգացւի, նա չպէտք է այս զանց առնի: Աստուծով գրեցաւ»:

Հաբիր նւաճեց Ջաւախը², Կասֆարնիս³ (?), Կիսալ, Խունան⁴, Սամցխէ, Գարդման, Կուստատֆի (?), Շաւշեղք, Բաղայետ⁵ խաղաղութեամբ, խնայելով բնակիչների արիւնք եւ հաստատելով

¹ Հմմտ. Const. Porphy. de Cerim., 687: Κοροβίτ. Կասկածելի է այս աշխարհագրական մանրամասնութիւնն, Վրաց սահմաններից միանգամայն դուրս լինելով:

² حوارج Այլ ընթերցում է տալիս Cod. Mus. Britt. Rich. 7496, f. 81 جراح, որ հաւանորէն ուղղելու է جواخ (Ջաւախ):

³ كسفر نيس թերեւս ուղղելու է كسفر نيس = Գուսաի Փառնէս:

⁴ Istaxri Խունան կ'անուանէ Տփղիսի մօտերքը, Շամքօրից 21 փարսախ հեռի:

⁵ Brosset: L'histoire de la Géorgie I, p. 45. Bazaleth.